Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 14.02.2020թ.
Ժամը՝ 09:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Բերբերյան /գնահատող/, Տ. Պետրոսյան /գնահատող/, Ք. Մարտիրոսյան /բացող/, Ա. Երմազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1.Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Սմարթլայն ՍՊԸ-ի, Մեծ Ծիածան ՍՊԸ-ի, Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի և Ա/Ձ Արարատ Ղուկասյանի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտում առկա անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.2 Քանի որ Փեն բոքս ՍՊԸ-ն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ ենթակետի համաձայն գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, գնահատող հանձնաժողովը որոշեց Փեն բոքս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չքննարկել և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Գ. Գևորգյան)

2.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա» որոշեց նիստը կասեցնել է, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

2.2 Գնման ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները տեղի կունենա 19.02.2020թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 19.02.2020թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Թ. Բերբերյան

---------- Տ. Պետրոսյան

---------- Ք. Մարտիրոսյան

---------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան